



ՄՈՒՐԱՏ-ՌԱՓԱՅԷԼԵԱՆ
ՆԱԽԿԻՆ ՍԱՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԻՒՆԸ
Կ. ՊՈԼՍՈՅ ՄԷՋ

Միաբանութեանս Երէջ անդամներէն Հ. Յակոբոս Վ. Բոսպոլյըքեան, մեծաւորը Կ. Պոլսի մեր Միութեան վարժարանին ի Բերա, իր 31 Մարտ Թուակիր նամակով Ուխտիս Պետին կ'աւետէր վերահաստատութիւնը Միութեան Սանկրու Միութեան, որ տեղի ունեցած էր Մարտ 22-ի կիրակին, 60 հոգիներու հաւաքով ժողով մը՝

Սաղըդ Աղաճի Ս. Աստուածածին եկեղեցւոյ նորաչէն մեծ սրահին մէջ. ուր, խանդավառ մթնոլորտի մէջ, մեր զանազան վարժարաններու հնազոյն եւ նոր սաներու խառն խումբը, համերաշխ եւ զոհունակ տրամադրութեամբ վարչական ժողովի անդամներ ընտրած է.

ՏՈՄԻՆԻԿ ՆՈՒՐԵԱՆ
ԱԼՊԵՐ ՍԻՐՐԷԼԵԱՆ
ՆՈՒՊԱՐ ԱԶԱՐԵԱՆ
ԱՐՄԱՆ ԷՄԻՐՁԷ
ՂԱԶԱՐՈՍ ԱՃԷՄԵԱՆ
ՅԱԿՈԲ ՔԵՐՈԲԵԱՆ
ՎԱՀԱՆ ԱՐՓԻԱՐԵԱՆ
ԿԱՐՊԻՍ ԲՈՒՆԱՐՃԵԱՆ
ԳՐԻԳՈՐ ԳԱՐԱԳԱՇԵԱՆ

Ատեմապետ
Փոխ - Ատեմապետ
Ատեմապիք
Արկղակալ
Խորհրդական
Խորհրդական
Համարակալ
{ Օգնական անդամներ
վարչութեան

Կը տեղեկանանք դարձեալ թէ, սաներու ամբողջական թիւը 300-ը կ'անցնի՝ համեմատ ցանկին. արդէն աւելի քան հարիւր արձանագրուած են Միութեան եւ այդ թիւը օրէ օր կ'աճի:

Ահա ուրախ լուրը, որ մեզ կը տանի մինչեւ դար մը ետեւ, երբ 1859-ին պատմական օր մը, անմահ Մ. Պէշիկթաշեան եւ ընկերները Ս. Հէքիմեան, Թ. Թերզեան, Մ. Աճէմեան, Ս. Թղլեան, Կ. Գարազեան, Թ. Եսայեան եւ երկայն շարք մը առաջինի եւ ազգասէր աշակերտներու հիմը կը դնէին «Մուրատեան եւ Ռափայէլեան Ընկերութեան», նպատակ ունենալով ամբարապետել կապը եղբայրութեան, ճանչնալ զիրար, զիրար սիրել, իրարու օգնել, օգնել մանաւանդ ազգին իր կարօտութեան մէջ՝ յանուն այն բարձր դադափարականին զոր ժառանգած էին Միութարէ, ու կրկին ազգասէր-բարերար հոգիներէն՝ Մուրատէ եւ Ռափայէլէ, ու յանուն Աստուծոյ եւ ազգին՝ դիմել զէպի յառաջ:

Պէշիկթաշեան, հոգին եւ զօրը այդ ընկերութեան, իր հոգեւորն խօսքերով՝ որ դարու մը հնութենէն կու գան միշտ ու դարու մը կենդանի, մեղի կու տայ նպատակն ու զիծերը այդ դադափարական ընկերութեան կամ միութեան, եւ մենք պարտականութիւն մը կը համարենք վերստին զանոնց մէջ մեր նոր սեւ-յիշելի դայն, մերձեցնել դայն մեր նոր սեւ-րունդներուն, քանի որ նոյն շաւիղէն է որ պիտի քալեն:

Ազգային հին ու նոր աղէտներն ու աւերները պատկերացնելէ յետոյ «Բայց ես սրտահառաչ ճայնիւ, կ'ըսէ, կը հրաւիրեմ զձեզ, կը հրաւիրեմ բոլոր ազգը ու ծունր զնեղով մեր պատմութեան անհուն դամբանին առջեւ, կը յորդորեմ զամէնքն ալ մէկտէր դարձնել աչքերը աւերակաց վրամէկտէր նայիլ ու առաջ քաշել. յառաջ, ու զիմաց նայիլ ու առաջ քաշել. յառաջ, ու այս է մշտաթաւալ աստեղաց ճայնը, բո-

լոր բնութեան ճայնը, վերջապէս Աստուծոյ ճայնը, յառաջ՝ ժամանակին լոյսով. յառաջ՝ զէպ այն ճամբան ուր առաջնորդ կեցած են այնչափ վսեմ հանճարներ ու բարերարներ, ուր առաջնորդ կեցած են նաեւ Մուրատ եւ Ռափայէլ. հարկ էր այս երկու անուններուն դիմաց մեծարանօք կանդ առնուլ ու խօսիլ ինչ որ ժամանակը ու երախտագէտ պատմութիւնը պիտի խօսին իրենց վրայ. հարկ էր յիշել մեր մանկութեան երջանկաւէտ օրերը օտար բայց բարերար աստեղաց տակ. սակայն անոնց վեհագուն որդիքը ժամանակ չեն ի տար ինծի ու յետոյ կը կոչեն. յառաջ առ դար-դացումն եւ առ լոյս. ու այդ անկողն ճամբորդութեանց դժուարութեանց ու վտանգացը մէջ զիրար աւելի աղէկ ճանչնալու համար իրարու եղբայր անունը տուէր. աւելի զօրաւոր եւ աննկուն ըլլալու համար ամէնքնիդ ալ մէկ սիրտ եղէր. եւ եթէ փորձանք եւ արդեւք բուռն զօրութեամբ կանգնին ձեր դիմացը, մի՛ երկնչիք անոնցմէ. ալեկոծմունք եւ փոթորիկք աւելի յառաջ պիտի մղեն զմեզ ժամանակաց ճամբուն վրայ. մինչեւ հասնինք Աստուծոյ մեղի մատնանիլ ըրած լուսաւոր ժամանակը. ու երանի՜ մեզի եթէ ետ մնացողներէն չըլլամք, մենք որդիք Հայկայ՝ ծնունդը երախտեաց Մուրատայ եւ Ռափայէլի» (1):

Այդ Միութիւնը կ'ապրի զործունեայ տանեակ եւ աւելի տարիներ ու յետոյ կարծես կը նուաղի. մինչ միեւնոյն ատեն Հ. Պետրոս Մինասեանի եւ Պէշիկթաշեանի շունչով կ'ապրէր Համազգեաց Ընկերութիւնը (1846էն) աւելի ընդարձակ ծրարագրով սիրոյ եւ եղբայրութեան դրօշը ծածանելու հայ ազգի բոլոր զաւակներուն

(1) Տե՛ս «Միւրաթ Պէշիկթաշեանի Երթուածներն ու ճանքերը». Հրտ. Արշ. Զօպանեանի, Փարիզ 1904.

մէջ, եղբայրութեան և ազգային մշակութային զարգացման գեղեցիկ ծրագրով:

Դժնէ ժամանակներ ու թիւրիմացութիւններ՝ քսան տարու առոյգ ու բեղուն կեանքէ մը վերջ դայն ալ ջնջեցին:

Համիտեան բռնութեան տապալումով Կ. Պոլսոյ մէջ ազատութեան շունչ մը տարածուեցաւ 1908ին. իսկոյն կազմակերպուեցան Մուրատ-Ռափայէլեաններ ու հին օրերու մաքուր դադարաւորականով դարձեալ կը պարզէին եղբայրութեան դրօշը: Եւ արդարեւ նոյն տարւոյն Հոկտ. 19-ին 81 նախկիններ հաւաքուած Բերայի մեր Միութեան վարժարանին մէջ՝ Ծերակուտական Արամ Երամեանի նախագահութեամբ կը վերանորոգէին նախկին Միութիւնը. ու այդ Միութեան մէջ կը փայլէին դրական թէ քաղաքական ասպարէզի մէջ գործող կարկառուն դէմքեր, ինչպէս Սադրղեան Յովհաննէս փաշա նախարարը, Թ. Թերզեան, Մկրտիչ Հէքիմեան, Հիւրմիւզեան Արտաշէս, Ոսկեան Գ., Սինապեան Գր. նախարար, Ե., Է. և Թ. Եսայեաններ, Շաշեաններ, Ապտուլլահներ, Հիսարեան Յ. կրթական նախարար, Թղեան Սր., Ս. Էքեան, Մ. Աճէմեան, Էտկար Մանաս, Դ. Թրեանց, Յ. Աճէմեան, Եաղըճեան, Մինասեան, որոնց քով չէ կարելի չիլիւ մեր անմոռանալի նահատակները՝ Վարուժան, Արիս Իսրայէլեան, Բարսեղ Շահապազ:

Այդ առիթով բժ. Միմիտեան որպէս նորընտիր վարչականին ատենադպիր՝ կը տեղեկագրէր «Բաղմալէպ»ին (1908, էջ 576) թէ այդ առաջին համագումարը «Ծողջողուն հանդէսի մը փայլը չունէր. ընդհակառակը շատ անսեթեթեւ և ընտանեկան հանգամանք մ'ունէր, սակայն վսեմ էր ան իր տարրերուն համախմբումին մէջ, որոնք առանց վարանելու տարիքի և ղերքի աշխատանքութեան վրայ, եկեր էին՝ եղբայրական զգացումներով առլցուն, զիրար ճանչնալու, իրարու ձեռքը սեղմելու

և յիշեցնելու թէ միեւնոյն բարերարաց յարկին տակ դաստիարակուած սաներ են: ... Միութեան Հարք իրենց դարաւոր կրթական գործունէութեան մէջ առիթը կ'ունենային հանդիսատես ըլլալու, աչքերնին հրճուանքի արցունքով լեցուելու չափ յուզուած, Միութեան մը առաջին կոչին հոն հաւաքուած հոծ բաղմութիւն մը իրենց նախկին դաստիարակներով, որոնք համերաշխութեան և եղբայրակցութեան սիրուն ներդաշնակութիւն մը կ'արտայայտէին. և որոնք միահամուռ զգացումով կը ծափահարէին ծրագրուած նըպատակին յենակէտը՝ որ է եղբայրակցական յարաբերութիւն մը գոյացնել Մուրատ-Ռափայէլեան սաներուն մէջ, աջակցելով իրարու նիւթապէս և բարոյապէս»:

Հազիւ եօթը տարիներ անցած էին երբ մեր տարաբախտ ազգին գլուխն եկաւ աղէտներու և աւերներու ահաւորագոյնը:

Ամբողջ ազգին հետ Միութիւնն ալ իր նահատակները սրաց, և որպիսի՜ նահատակներ. դադրեցնելով առժամապէս իր գործունէութիւնը, ինչպէս կը տեսնուի 1915-ի Ապրիլ 9-ին (Ատենագրութիւն, նիստ 86րդ):

Զինադադարի վաղորդայնին Միութիւնը կը վերսկսի իր կեանքը (9 Փետրուար 1919) դժուար պայմաններու մէջ՝ առանց սեփական հաւաքատեղի մը ունենալու, և առանց հնարաւորութեան տարեկան ընդհանուր ժողով գումարելու:

Դաշնակից պետութիւններու մեկնումը Կ. Պոլսէն, 1922-ին, նոր և ճակատագրական կացութիւն մը կը ստեղծէր, որու հետեւանքով կը ցրուէին Միութեան անդամները:

Սակաւաթիւ անդամներ 1922 Դեկտ. 14-ին (Ատենագր. նիստ 97րդ) որոշեցին Միութիւնը սրահել դադարեալ բայց ոչ լուծեալ վիճակի մէջ՝ սպասելով լաւա-

դոյն օրերու և կարելիութեան(1):

1922-1929 չրջանը կ'անցնի անորոշ վիճակով և Միութիւնը անթեղեալ կրակի մը պէս կը սպասէր բարերար շունչի մը որ վերստին արծարծէր:

1928-ին վերաբացուած էր Սեւրի մէջ - Փարիզի մօտ - Մուրատեան վարժարանը, որ փրկարար դեր մը կը կատարէր յիշեալ Միութեան նկատմամբ:

Եւ արդարեւ հոն էր որ տարի մը վերջ կրցաւ իր առաջին բոյնը դնել դարաւոր Միութիւնը և դարձեալ նորոգել իր լաւագոյն յիշատակները եղբայրութեան դրօշին ներքեւ:

«Տասնեւչորս տարուան դադարէ մը յետոյ - կ'ըսէ Կոչը - Տեղեկատուն(2) վերստին կը հրատարակենք, որովհետեւ կը զգանք որ ժամանակը եկած է շարքերը տեղափոխելու: Ի սփիւռս աշխարհի ցրուած մեր ընկերները կը հրաւիրենք այսօր, դարձեալ բոլորուելու մեր անմահ բարերարներու խնկելի յիշատակը պանծացնելու կոչուած Միութեան դրօշին շուրջը: ... Բաւական է որ հորիզոնին որ և է մէկ կողմէն բարձրանայ այն դրօշը, որ պէտք յուզումով և խանդավառութեամբ «ներկայ» պատասխանը թնդայ ամէն Մուրատ-Ռափայէլեաններու բերանէն:

Ինչքան ալ դժնդակ եղած ըլլան դադարի տասնեւչորս տարիներու անջրպետին մէջ պատահած արհաւիրքները և որչափ ալ մեծ թիւ մը կազմեն զոհերը որ տուինք մեր երէցներու և կրտսերներու շարքերէն, մնացողներս, առաւել քան երբեք աւելի զօրաւոր եռանդով կը խմբուինք Ս. Ղազարի պատուական Հայրերու լուսնամբին յանձնուած վարժարաններու

շուրջը, վերապրելու համար մեր հին յիշատակները և փոխանցելու համար նոր սերունդին ա'յն կտակը, որ մեծ հիմնադիրը՝ Մկրտիչ Պէշիկթաշլեան աւանդեց մեզի. - «Տուր ինձ քու ձեռք, եղբայր եմք մեք»:

Համաշխարհային երկրորդ պատերազմը (1939-1945) իր մահափիւռ ճիւղաններով կը կասեցնէր ամէն հաւաքական ու հասարակական ձեռնարկ: Բայց ահա, աշխարհաստան աւերումներէն վերջ, կը վերաբացուէր Սեւրի Մուրատեան վարժարանը (1946), քիչ վերջ նաեւ Վենետիկի Մուրատ-Ռափայէլեանը (1950): Ու ահա կը վերարծարծէր նախկին Սաներու Միութիւնը, և նոր մասնաճիւղ մը կ'ընծիւղէր Մարտիլիոյ մէջ. ուր, քիչ ժամանակի ընթացքին, ձեռնհաս կազմակերպութեամբ հաւաքոյթներ և հանդէսներ կը սարքուէին ընդհանուր խանդավառութեան մէջ. ու տակաւին կը շարունակեն նոյն տենդոտ, ազգանուէր ու ազգապահական գործունէութիւնը: (Տե՛ս Միքայիլեան Լևոնի 1950, էջ 207. 1951, էջ 8, 32, 120, 139, 141. 1952, էջ 72, 95 ևւն.):

Միութեան և Մուրատ Ռափայէլի սուրբ և բարերար անուններուն հմայքով Սաներու Միութիւնը կենդանի Փարիզի և Մարտիլիոյ մէջ, կը վերապրի ահա նաեւ նոր շառաւիղումով մը՝ իր նախկին բնակավայրին մէջ ալ՝ Կ. Պոլիս, յետ լուսերեսնամեակի մը: Ու Միութեան մէջ կը ձուլուին անխորի բոլոր Միութեան հաստատութիւններու սաները, ինչ որ նոր ոյժ և նոր ու լաւագոյն յաջողութիւններ կը խոստանայ:

Մենք գծեցինք հակիրճ պատմութիւնը


(1) Այս և վերոյիշեալ տուեալներու մասին տե՛ս «Տեղեկատու Մուրատ-Ռափայէլեան նախկին աշակերտներու միութեան» (Բ. շրջան, Ա. տարի. Բ. 1. Յունուար 1930, Փարիզ, էջ 1):

(2) Տե՛ս «Տեղեկատու Մուրատ-Ռափայէլեան նախկին աշակերտներու միութեան» (Բ. շրջան, Ա. տարի. Բ. 1. Յունուար 1930, Փարիզ, էջ 1):

մեր Նախկին Սաներու Միութեան. կ'ուզենք որ խմբագրութենէն վեր պատկանելի ձայն մը փախէ մեր դժած պատկերը վերակազմ Միութեան, լաւագոյն մաղթանքն ընելով: Կ'ակնարկենք Միաբանութեանս Ընդհանուր Արբաճօր խնդակցական նամակին որ կ'ուղղուէր նոյն սիրելի Միութեան վարչութեան ու անդամներուն, տարւոյս Մայիս 12 թուակիրով, ուր Գերպ. Սրապիոն Արբաճայր, յետ ակնարկելու Միութեան նախկին հիմնադրութիւնը եւ զիրենք դովելու այս նոր յաջողութեան համար, կը շեշտէ անոնց թէ «Վըստահ եմ թէ ձերն ալ է անոնց (հիներուն) դեղեցիկ նպատակը. վառ պահել մեծն Մըխիթարի եւ Մուրատ-Ռափայէլ բարերարներու սուրբ անուններն եւ պաշտամունքը ձեր հոգւոյն մէջ եւ այդ նուիրական անուններու զօղով միանալ, ճանչնալու զիրար՝ հին ու նոր սերունդներ, իրարու օ-

ժանդակել, վերջապէս զիրար սիրել եւ նուիրական պարտականութիւն ընել սիրելու ազգը եւ ծառայելու անոր... Դուք էք ժաւական սիրով սրտապնդել զձեզ, հայցելով ձեր վարչութեան եւ մէն մի անդամին վըրայ Աստուծոյ լիառատ օրհնութիւնները, որպէսզի ձեր Միութիւնը դառնայ միշտ արծարծ վառարան մը ուսկից ամէնքդ ջերմանաք սիրով, եւ միացեալ ոյժերով կարենաք իրադրծել ինչ որ ձեզի պիտի ներշնչեն Միթիւնը ու մեծ Բարերարները, ու միանգամայն ձեր նախորդները, որոնք երկնքէն պիտի հրճուին՝ տեսնելով որ նախանձանդիր էք շարունակելու իրենց անդուծութիւնները եւ իրադրծելու իրենց սրբազան կտակը՝ սիրոյ եւ եղբայրութեան դրօշին ներքեւ»:

Հ. Ե. Փ.



ՇՆՈՐՀԱԿԱՆՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՅԱԾ ԵՆՔ

- ԳԱՆՅԱՅԵԱՆ ԱՐԻՍ Տ. Կ. - Զօմարտ: Նիւ Եորք, տպ. Կոչնակ, 1930, էջ 168:
 -- Եղեմական յուշարձան եւ էջմիածնական յուշեր: Ֆրէզնոյ, Քալիֆ. 1950, էջ 308:
 ԳՐԻԳՈՐ ՎԱՀԱՆ. - Երկու քամբայ. Թատերգութիւն երեք արար: Փարիզ, տպ. Լը Սոլէյ, 1952, էջ 99:
 -- Բախտին անիւր. կատակերգութիւն երեք արար: Ազգային բարերար մը, զաւեշտ ողբերգ. մէկ արար: Փարիզ, տպ. Լը Սոլէյ, 1952, էջ 94:
 ԱՐԵՆ. - Պարբերակիք գրականութեան եւ քննադատութեան: Ա. տարի, թիւ 1. Մայիս 1953, Պէյրութ:
 ԳԱՆՅԱՅԵԱՆ ՀԵՂԻՆԵՆ - Վանագի Պետիկը: Թեհրան, տպ. Իրանշահ, 1952, էջ 103:
 ԶՈՀԱԿԱՆ - Ճրագալոյց: Իսթանպուլ, տպ. Գ. Պէճիտեան, 1953, էջ 49:
 «ՀԱՄԱԶԳԱՅԻՆ» Տարեգիրք, 1953, տպ. «Համագոյն» Ընկերութեան: Պէյրութ, էջ 312, գիրք 3.50 Լիր. սակի. արտասահման՝ 1.50 տալ:
 ՄԱԼԵԱՍ - Ճամբու վրայ: Հատոր Ա: Նիւ Եորք, 1953, էջ 607:
 ՈՍԿԵԱՆ Հ. ՀԱՄԱԶԱՍՊ - Տիպար երիտասարդ եղբ. Գրիգոր Ինգիլիզեան: Բէյրութ, տպ. Մշակ, էջ 80:

Der Nersessian Sirarpie. - Armenia and the Byzantine Empire (A Brief Study of Armenian Art and Civilization). Cambridge, Massachusetts. Harvard Univ. Press, 1947, pg. XXI + 148 + XXXII.

Mermillod-Lombard E. - Louys i lousso. Hommage à Artaches Ohaunessian. Pontoise (S. et O.) 1951, pg. 66, édition réservée «Ochagan».

MHNYMATA - MESSAGES. - Millénaire de la Bibliothèque du Patriarcat grec orthodoxe d'Alexandrie (952-1952). 1952, Alexandrie, pg. 79.

Νεοφύτου πρεσβυτέρου μονάχου καὶ ἐκκλησιастου τυπικὴ συν θεῷ διαθήκη Laing Ms. III, 811 τῆς πανεπιστημιακῆς βιβλιοθήκης τοῦ Εὐρυβούργου ὑπὸ Π. Τσικνοπουλλου - Ἐν Λαονάκι Κύπρου, 1952, էջ 54:

Leon Arpee. - A history of Armenian Christianity, New York, 1946, p. 386.

Edouard Utudjian. - L'Urbanisme souterrain, Paris, 1952.

Шагинян Маршета. - Путешествие по Советской Армении, Москва, Тип. Красное знамя, pg. 301 (Նուէր Փրոֆ. Վ. Թաթմանցի):

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՐԻ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ Հ. ՄԵՍՐՈՊ Վ. ՃԱՆԱՇ ԵԱՆԻ

ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ

Վերահանուցի շրջան - Աշտարակի գրականութիւն - Զարթօնքի սերունդ - Աշտարակաւար գրականութեան Ա. և Բ. շրջաններ (1701-1915)

Հմտալից եւ մանրամասն ուսումնասիրութիւն գարեբու եւ գրական շրջաններու, հեղինակներու կեանքին եւ գործերուն պայծառ վերլուծումներով, մատենագիտական ցուցակներով եւ լուսանկարներով, ի յայտ բերելով հետաքրքրական նորութիւններ գիտններու եւ մամուլի անյայտ խորշերէն:

Գիտել՝

(Italie)

Imprimerie Arménienne - St. Lazare

VENISE